

ՀՀ Շիրակի մարզում անցկացվելիք «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների

միջազգային 8-րդ պլեներ» մշակութային միջոցառման նկարագիր

«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեներին մասնակցելու համար ՀՀ յուրաքանչյուր մարզպետարան, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը կներկայացնի 3 նկարիչ-մասնակցի /ներառյալ ջոկատի ղեկավարը/ հայտ:

Մասնակիցների տարիքը չի գերազանցի 30 տարեկանը:

Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Թորոսգյուղին կից գտնվող «Աղաջանյան» ճամբար

Անցկացման ժամանակահատվածը՝ 19-22-ը օգոստոսի, 2019 թվականի

Մարզերից Պլեների մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝

1-ը օգոստոսի, 2019 թվականի

Ծրագրի մասնակիցները և գործնական տեղեկատվություն

Ծրագրին կմասնակցեն 18-30 տարեկան թվով 45 նկարիչներ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Զապախք շրջանից, Սփյուռքից և այլ երկրներից: Ծրագրի 45 մասնակցի համար կազմակերպիչ կողմը կապահովվի 3-օրյա կեցություն և օրական 3-անգամյա սնունդ, էքսկուրսիոն ծախսերը, լոկալ տրանսպորտը, անվճար վարպետության դասեր, մարզական, մշակութային և ժամանցային միջոցառումներ: Արտերկրի մասնակիցները իրենք են հոգալու ճանապարհածախսը մինչև Շիրակի մարզկենտրոն քաղաք Գյումրի: ՀՀ մասնակիցների համար մարզկենտրոն Գյումրիից մինչև միջոցառման անցկացման վայր ճանապարհածախսը հոգում է կազմակերպիչ կողմը: Մասնակիցները պետք է իրենց հետ ունենան նաև անհրաժեշտ նկարչական պարագաներ:

Այս տարվա պլեներին նախորդ տարիների մասնակիցներից կարող է մասնակցել միայն մեկը /միայն երկրորդ անգամ, երրորդ անգամ չի թույլատրվում/՝ ջոկատի ղեկավարի կարգավիճակով: Մյուս երկու մասնակիցները պետք է մասնակցած չլինեն «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային պլեներներներից ոչ մեկին: Ցանկալի է, որ նկարչությունից բացի նկարիչները ունենան վառ ունակություններ նաև մարզամշակութային այլ ոլորտներում՝ ազատ ժամանցն առավել հետաքրքիր կազմակերպելու համար, իրենց հետ ունենան երաժշտական գործիքներ /կիթառ, ակորդեոն և այլ/ և հավելյալ ժամանցային խաղեր:

ՀՀ տարածքի մասնակիցներին կներկայացնեն Երևանի քաղաքապետարանը և ՀՀ մարզպետարանները՝ յուրաքանչյուր պատվիրակության մեջ ընդգրկելով 3-ական ներկայացուցիչ /1-ը ջոկատի ղեկավարի կարգավիճակով/:

ՀՀ մարզերում և մայրաքաղաք Երևանում կանցկացվեն նախընտրական փուլեր, որոնց արդյունքում լավագույնը ճանաչված երիտասարդ նկարիչները հնարավորություն կստանան մասնակցելու «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեներին:

Միջոցառումների անցկացման ժամանակացույց

h/h	Միջոցառման ժամանակահատված	Միջոցառման անվանումը
1	2019 թ. հուլիսի 19-ից հուլիսի 26-ը	Երևան քաղաքի և ՀՀ մարզերի տեղային փուլերի անցկացում
2	2019 թ. հուլիսի 29-ից օգոստոսի 1-ը	Հայտերի ներկայացում ՀՀ Շիրակի մարզպետարան
3	2019 թ. օգոստոսի 19-22-ը	«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեների անցկացում

Ծրագրի պատմություն և հակիրճ նկարագրություն

2012 թվականի օգոստոսի 28-31-ը ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից ՀՀ Շիրակի մարզի «Մանուշակ» ճամբարում կազմակերպվեց և անցկացվեց «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների հանրապետական առաջին պլեները, որին մասնակցեցին երիտասարդ նկարիչների պատվիրակություններ՝ ՀՀ բոլոր մարզերից, մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև վաստակավոր նկարիչներ՝ ՌԴ Ուլյանովսկի մարզից, ովքեր, հայ արվեստագետների կողքին անցկացրեցին վարպետաց դասեր: Ծրագիրն առաջինն էր ՀՀ-ում՝ աշխարհագրությամբ և ծավալով, և արձագանքն այնքան մեծ էր, որ կարիք առաջացավ այն դարձնելու ամենամյա միջազգային՝ տարեցտարի մեծացնելով մասնակից պատվիրակությունների թիվը:

2013 թվականի օգոստոսի 25-30-ը «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 2-րդ պլեները հյուրընկալեց երիտասարդ նկարիչների պատվիրակություններ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիից և Ջավախք շրջանից, ՌԴ մայրաքաղաք Մոսկվայից, Ուդմուրտիայի Հանրապետությունից: Այն նվիրվեց Մինաս Ավետիսյանի ծննդյան 85-ամյակին: Մասնակիցների թիվը հասավ 55-ի, օրերի տևողությունը՝ 6-ի:

2014 թվականի օգոստոսի 25-30-ը ՀՀ Շիրակի մարզի Թորոսգյուղ համայնքին կից գտնվող «Երեքնուկ» հանգստի գոտու տարածքում ՀՀ Շիրակի մարզպետարանը և «Արվեստը հանուն խաղաղության» հասարակական կազմակերպությունն անցկացրեցին «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 3-րդ պլեները: Մասնակիցների թիվը հասավ 60-ի: Ծրագրին մասնակցեցին 18-30 տարեկան երիտասարդ նկարիչներ Հայաստանի Հանրապետությունից, ԼՂՀ-ից, Սփյուռքից, ԱՊՀ անդամ պետություններից, Եվրոպայից:

2015 թվականի օգոստոսի 27-30-ը անցկացվեց «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 4-րդ պլեները: Այն նվիրվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ կրելով «Վերածնված Հայաստանի արվեստագետները» խորագիրը: Միջոցառումն իր մեջ ներառեց նաև երկու այլ խորհուրդ՝ նվիրվելով հայ մեծանուն գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ծննդյան 135-ամյակին և ծնունդով շիրակցի գեղանկարիչ Մինաս Ավետիսյանի մահվան 40-րդ տարելիցին: Պլեները համախմբեց 50 երիտասարդ արվեստագետներ՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից և Սփյուռքից:

2016 թվականի օգոստոսի 28-31-ը Թորոսգյուղի «Աղաջանյան» ճամբարում անցկացված

«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 5-րդ պլեները նվիրվեց Հայաստանի Հանրապետության Անկախության 25-ամյակին և ունեցավ «Անկախ Հայաստանի երիտասարդ արվեստագետները» խորագիրը: Պլեները համախմբեց 55 երիտասարդ արվեստագետների՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից և Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից:

2017 թվականի օգոստոսի 22-25-ը ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Գարուն» հանգստի գոտու տարածքում անցկացված «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 6-րդ պլեները նվիրվեց հայ մեծանուն ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին: Պլեներին մասնակցեցին 45 երիտասարդ արվեստագետներ՝ ՀՀ ողջ տարածքից և ԼՂՀ-ից:

2018 թվականի օգոստոսի 28-31-ը ՀՀ Շիրակի մարզի «Աղաջանյան» ճամբարում անցկացվեց «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 7-րդ պլեները: Այն նվիրվեց մեծանուն հայ նկարիչ Մինաս Ավետիսյանի ծննդյան 90-ամյակին և Հայաստանի Առաջին Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին և ունենցավ «Անկախ Հայաստանի երիտասարդ արվեստագետները» խորագիրը: Պլեները համախմբեց 18-30 տարեկան 45 երիտասարդ արվեստագետների՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից:

2019 թվականի օգոստոսի 19-22-ը ՀՀ Շիրակի մարզի «Աղաջանյան» ճամբարում կանցկացվի «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեները: Այն կնվիրվի ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի 150-ամյակներին: Պլեները կհամախմբի 18-30 տարեկան 45 երիտասարդ արվեստագետների՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի նպատակն է ՀՀ և օտարերկրյա երիտասարդ արվեստագետների միջև ստեղծել միջմշակութային համագործակցության հարթակ, այն ծառայեցնելով որպես մշակութային երկխոսության ապահովման երաշխիք:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Կազմակերպել և անցկացնել թվով 45 ՀՀ և օտարերկրացի երիտասարդ նկարիչների մասնակցությամբ եռօրյա տևողությամբ Պլեներ /նկարչություն բաց երկնքի տակ/, այն ուղեկցելով բացօթյա նկարչությամբ, վարպետության դասերով, գիտաճանաչողական էքսկուրսիաներով և շրջիկ ցուցահանդեսներով:

2. ՀՀ և օտարերկրյա երիտասարդ արվեստագետների միջև ապահովել արդյունավետ փոքր խմբի փոխանակում, միջմշակութային երկխոսություն, տեսական գիտելիքների միջոցով նրանց հաղորդակից դարձնելով ՀՀ և համամարդկային մշակութային արժեքներին:

3. Ստեղծել էլեկտրոնային առցանց հարթակ՝ ծրագրի մասնակիցների գրանցմամբ և ցանցի հետագա ընդլայնման հեռանկարներով, ստեղծված հարթակը լավագույնս ծառայեցնելով ՀՀ և օտարերկրյա երիտասարդ արվեստագետների հետագա համագործակցության, փոքր խմբի փոխանակման և նոր նախագծերի ստեղծման համար:

Ծրագրի բովանդակություն և մեթոդաբանություն

Շատ երիտասարդներ, ուսանելով ՀՀ արվեստի ԲՈՒՀ-երում, հնարավորություն չունեն իրենց մշակութային արտադրանքի ցուցադրման, հանրահռչակման, ինչպես նաև միջազգային փորձի մեջ ինտեգրման համար: Այդ պատճառով նրանց մոտ առաջանում է թերաթեքության բարդույթ, չեն ձգտում նորարարական մոտեցումների ընկալման, ինքնադրսևորման և ինքնարտահայտման համար ուղիների որոնման: Վերը նշված հիմնախնդիրները պատճառ են հանդիսանում, որ շատ արհեստավարժ արվեստագետներ լճանում են, չեն զարգանում և հետագայում չեն համալրում ազգային և համամարդկային մշակութային ժառանգության պահոցները՝ չնայած ունենալով այդ պոտենցիալը: Ծրագիրը կրում է «Մինասի գույներով» խորագիրը, որը լավագույնս հնարավորություն կտա հայ և օտարերկրյա երիտասարդներին՝ հանձին շիրակցի մեծ գեղանկարիչ Մինաս Ավետիսյանի, ճանաչելու և արժևորելու հայ մշակույթի գանձերը: Ակտիվ հանգիստը կուղեկցվի ստեղծագործական և մրցակցային բովանդակությամբ, երիտասարդները ճամբարային բարեկամական և միջմշակութային պայմաններում կմասնակցեն պլեներային դասերի, կնկարեն Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձանները, ՀՀ բնությունն՝ իր բազմազանությամբ և գույներով, կայցելեն թանգարաններ, մշակութային կրթության օջախներ, լավագույն վարպետների կողմից կվերապատրաստվեն, կստանան տեսական և գործնական գիտելիքներ, կուսումնասիրեն Հայաստանի և արտասահմանյան մշակույթը, կունենան արդյունավետ փորձի փոխանակում, կմշակեն համատեղ ծրագրեր: Ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքի երիտասարդ արվեստագետների միջև կձևավորվի մրցակցային ոգի, կհաղթահարվի նրանց մեջ թերաթեքության բարդույթը, հնարավորություն կընձեռվի միջազգային մակարդակով փորձի փոխանակման, նոր հմտությունների ձեռք բերման:

Պլեների մասնակիցների ընդունելությունը նախատեսված է օգոստոսի 19-ին, ժամը 11:00-ին, Գյումրու կենտրոնական /Վարդանանց/ հրապարակում:

Ծրագրի հանդիսավոր արարողությունը և «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային ամենամյա պլեների մասնակիցների աշխատանքների ցուցահանդեսի բացումը նախատեսվում է անցկացնել օգոստոսի 21-ին, ժամը 20:00-ին, «Աղաջանյան» ճամբարում:

Մասնակիցների մեկնումը նախատեսվում է օգոստոսի 22-ին, ժամը 14:00-ին:

Ծրագրի մասնակիցների համար կազմակերպիչ կողմը 3 օր կապահովի 3-անգամյա սնունդ, կեցություն, էքսկուրսիոն ծախսերը, լոկալ տրանսպորտը, անվճար վարպետության դասեր, մարզական, մշակութային և ժամանցային միջոցառումներ: